805 Օրերը այս կարճ թռչում են արագ,

1. Օրերը այս կարճ թռչում են արագ,
Կյանքն այս նման է մի թելի բարակ:
Կյանքն այս նման է նաև սափորի,
Որ չի կոտրվել մոտը աղբյուրի:

Փնտրի՛ր դու Հիսուսին,
Նա քեզ կհայտնվի,
Կանչի՛ր Նրա անունը,
Նա է քո Թագավորը:
Բերանիդ խոսքերը,
Սրտիդ խորհուրդները
Նա կընդունի այսօր:

2. Թե որ այս կյանքում շատ հոգսեր անես,
Հագնելու համար դու մտահոգվես,
Դաշտի շուշանը երբեք չի մանում,
Նայի՛ր, թե Աստված ինչպես է հագցնում:

3. Միտք առե՛ք, մարդի՛կ, ո՛վ դուք անցորդներ,
Ինչո՞ւ են ձեզ պետք այդքան շատ բաներ,
Երկնքում այնքան շատ թռչուններ կան,
Չեն ցանում երբեք, չունեն շտեմարան: